ՏԵՂԵԿԱՆՔ

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ” ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմական համագործակցության սկզբնավորման և իրավական հիմք են հանդիսացել 2011թ. հունվարի 19-ին Աթենքում ստորագրված <<Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարության միջև ռազմական համագործակցության վերաբերյալ>> Համաձայնագիրը, որը հաստատվել է ՀՀ Նախագահի 2011թ. հունիսի 23-ի թիվ ՆՀ-110-Ն հրամանագրով, ինչպես նաև 1999թ. հոկտեմբերի 18-ին ստորագրված <<Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև սպառազինության և պաշտպանական տեխնոլոգիաների բնագավառում համագործակցության մասին>> Համաձայնագիրը, որը վավերացվել է ՀՀ ԱԺ 2001թ. փետրվարի 20-ի Ն-151-2 որոշմամբ: Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունը ՆԱՏՕ ԳՀԽ ծրագրի շրջանակներում ակտիվ ռազմական համագործակցություն է ծավալում ՆԱՏՕ-ի անդամ պետությունների հետ, ինչը պայմանավորված է խաղաղության ու անվտանգության պահպանման նպատակով տարածաշրջանում ռազմաքաղաքական հավասարակշռության ստեղծմամբ: Այդ տեսանկյունից որոշակի քայլեր են ձեռնարկվում նաև Հունաստանի Հանրապետության հետ ռազմատեխնիկական հարաբերությունների զարգացման գործում:

ՀՀ պաշտպանության նախարարությունում պատրաստել է “Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին” Համաձայնագրի նախագիծը /այսուհետ՝ Նախագիծ/: Նախագծով Կողմերն իրենց իրավասու մարմինների միջոցով (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Հունաստանի Հանրապետության ազգային պաշտպանության նախարարությունը), իրենց պետությունների ազգային օրենսդրությանը համապատասխան, աջակցում են երկկողմ ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը, մասնավորապես, հիմնվելով ռազմատեխնիկական համագործակցության սուբյեկտների միջև ստորագրված համաձայնագրերին և պայմանագրերին, Կողմերն իրականացնում են սպառազինության և ռազմական հանդերձանքի, զինամթերքի, պահեստամասերի փոխադարձ մատակարարում, ռազմական նշանակության արտադրանքի համատեղ զարգացում և արտադրություն, ռազմատեխնիկական նշանակության

ծառայությունների տրամադրում ու վերապատրաստում: Նախագծով նախատեսված է, որ դրա դրույթների իրականացման նպատակով Կողմերը ստեղծում են հայ-հունական ռազմատեխնիկական համագործակցության միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովի նիստերը նախատեսվում է գումարել տարեկան սկզբունքով, հաջորդականության կարգով կամ Հայաստանի Հանրապետությունում, կամ՝ Հունաստանի Հանրապետությունում: Հանձնաժողովն ընդունող Կողմը կնախագահի նիստը և կիրականացնի նիստի կազմակերպման հետ կապված միջոցառումները: Համաձայնագիրը նախատեսվում է կնքել անորոշ ժամանակահատվածով:

Հաշվի առնելով վերոգրյալը, ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել "Հայաստանի Հանրապետության կառավարության և Հունաստանի Հանրապետության կառավարության միջև ռազմատեխնիկական համագործակցության մասին" համաձայնագրի կնքման նպատակով անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս. ՕՀԱՆՅԱՆ